# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ՍՑ-ՆԳ-2022/204**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.05.2022թ. թիվ /26-1/7755-2022 գրությամբ «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի 25.04.2022թ. թիվ 25/6300-22 գրության հիման վրա, 02.05.2022թ. թիվ /26-1/7755-2022 գրությամբ նախաձեռնել է «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>«Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը դիրքորոշումը.

«Հայտնում եմ Ձեզ, որ «Ս.Հոսո»ՍՊ-ընկերության և Երևանի քաղաքապետարանի հետ 01.06.2021թ. կնքվծ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/28 պայմանագրի շրջանակներում ընկերությունը իրականացրել է Արաբկիր վարչական շրջանի բակային տարածքների ընթացիկ վերանորոգման աշխատանքները: Նախքան աշխատանքները՝ Ընկերություն Պատվիրատուից պահանջեց տվյալ աշխատանքները կատարելու համար հասցեներ և յուրաքանչյուր հասցեում Ներառված լինեն այն ծավալները,որոնք անհրաժտ են տվյալ բակային տարածքների համար,քանի-որ պայմանագրով նախատեսված ծավալաթերթ-նախահաշվում չէին ներառված: Ընկերության պահանջով տրամադրեց հասցեների ցուցակ և 37 բակայի տարածքների համար ծավալաթերթ-նախահաշիվ,որոնք չունեին իրավական ուժ և չէին կնիքված: Բացի դրանից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվներումներառված չեն այն ծավալները որոնք անհրաժեշտ էին տվյալ բակային տարածքների համար, որոնց 30-35 տոկոսը դուրս են մնում որպես ոչ համատեղելի չկատարված աշխատանքներ: Իսկ ինչ վերաբերվումու է համադրմանը՝ Ընկերությունը կոմունալի պետին Ներկայացրեց բնակիչների բողոքը և զայրույթը մեջբերում եմ.« Մեգ համար այնքնամ կարևոր չէ բազրիքների և տաղավարների Ներկումը ինչքն-որ խաղերի վերանորոգումը » քանակով 40 խաղ այն ինչ պայմանագրում ներառված է 4-ը խաղի վերանորոգում: Կոմունալի պետը հանձնարարեց ընկերությանը՝ ասելով տեխ հսկիչի հետ միասին կազմեք համադրում,ներառված աշխատանքները անհրաժեշտ են բակային տարածքների համար,հանձնարարությունը կատարվեց և հանջնվեց պատվիրատուին:

Սակայն էմիլ Գալստյանը՝ ով աշխատուն է շինարար-ինժիներ Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակագմի կոմունալ տնտեսության և ԲՇԿՄ-ի հետ աշխատանքների կազմակերպման բաժնում և վերհսկում է մեր ընկերության աշխատանքները: Ներկայացված համադրումը պահելով իր մոտ 1 ամսից ավել հետ վերադարձրեց ընկերությանը պատճառաբանելով «Ես Նպատակահարմար չեմ գտնում կատարել համադրում».

Մեջբերում եմ էմիլ Գալստյանի խոսքերը «Եթե որևիցե մեկը պարտադրի խաղեր և չնախատեսված այլ աշխարանքներ վերանորոգվեն ես չեմ ստորագրի կատարողական ակտը և չես վարձատրվի»:

Իսկ ինչ վերաբերվում է ներկայացված կատարղական ակտերին կարող եմ ասել հետևյալը, 78 օր պահելով ներկայացված համար 2 կատարղական ակտը էմիլ Գալստյանի կողմից խորհրդակցության ժամանակ առաջարկվեց կատարողականից հանել Սիզամարգի տեղադրումը ,քանի որ դա իրենից չի Ներկայացնում խոտի սերմի ցանում այլ դրա փոխարեմ պետք է լինի Չիմածածք: Սակայն պետք է ասեմ ավե[ին № 1 առաջին կատարողականուն ներառված է եղել 670 քմ Սիզամարգի տեղադրում (սերմի ցանում ) որը համձնաժողովի կողմից ընդունվել և ներկայացվել է վճարման:ԸՆկերության կողմից կատարված աշխատանքները ներկայացվեց վճարման թիվ համար 3 կատարողական ակտով հանձնաժողովի կողմից ընղուն վեց, կնիքվեց և ներկայացվեց համապատասխան բաժին վերջինս վճարելու համար,բայց առ այսօր չի կատարվել վճարումը որի գումարը կազմում է 1613,438 հազար դրամ,պատճառաբանելով ծավալների 25-30 տոկոսը չի կատարվել,իրոք դա այդպես է, քանի որ հաշվի չեն առել վերը նշված բոլոր հիմքերի առկայությունը: «Ս.Հոսո»ՍՊ-ընկերությունը 10.01.2022թ. պաշտոնական գրություն է ներկայացրել Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Ա.Դանելյանին ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3 ՀԱՆՁՆՄԱՆ- ԸՆԴՈՒՆՄԱՆ ակտը ուղարկել քաղաքապետարան 2022թ. Պարտքերի ցուցակուն ներառելու և վերջինիս գումարը վճարելու համար, որին առ այսօր ընթացք չի տրվել:

Ընկերությունը կատարել է հետևյալ չնախատեղված աշխատանքներ որի դիմաց չի վճարվել և չի էլ պահանջել:

1. Մետաղական մասերի ներկում 800 քմ և ավել:

2. Նախքան հողային աշխատանքները .մաքրել ենք տվյալ տարածքները (քարերից, փշերից, Կոճղերից 1815 քմ և առաջացած կույտերը տեղափոխել եմք 13 կմ հեռավորության վրա:

3. Վերանորոգել ենք թվով 13 խաղեր:

Խնդրում ենք Ձեզ հաշվի առնել վերը նշված թերությունները և տալ հաշվենկատ լուծում:»:

«Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/204 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 14:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. <u>Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.04.2022թ. թիվ 25/6300-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ի միջև 01.06.2021 թվականին կնքված ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/28 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բակերի ընթացիկ վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վճարել դրա համար»:

Աշխատանքների վերջնաժամկետը ըստ պայմանագրի սահմանված է եղել 17.12.2021թ. և այդ ընթացքում ընկերության կողմից կատարվել է պայմանագրային ծավալի 63.8%-ը:

Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից բազմիցս եղել են բանավոր և գրավոր զգուշացումներ «Ս.ՀՈՍՈ» ՍՊ ընկերությանը՝ ուշացումների հետ կապված:

24.12.2021 թվականին Կապալառուի կողմից ստացել ենք գրություն՝ վերոնշյալ պայամանագրի շրջանակներում կատարվող հետագա աշխատանքների անհնարինության մասին՝ պատճառաբանելով տնօրենի մոտ ախտորոշված հետապնդող հիվանդությունը, որը անհամատեղելի է դարձնում աշխատանքի հետևողական լիելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ

որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ «Պայմանագիրը լուծվում է միակողմանի, եթե՝ ա/ Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, բ/ Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը, գ/ Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին, դ/ Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կապալառուի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Սփաբկիր վարչական շրջանի ղեկավարի /Երևանի քաղաքապետի 16.11.2020թ. թիվ 3576-Ա որոշում/, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի հրաժարվում է կնքված պայմանագրից /2982814 ՀՀ դրամ գումարի չափով/՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-0 որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությունով, առաջարկում եմ «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Կից տրամադրվում է վերը նշված պայմանագիրը մասնակի լուծելու վերաբերյալ հիմք հանդիսացած համապատասխան փաստաթղթերի պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/204 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 14:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2022/204 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2022/204 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ի միջև 01.06.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/28» ծածկագրով պետության կարիքների համար աշխատանքների կատարման՝ կապալի պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բակերի ընթացիկ վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վճարել դրա համար

2. Պայմանագրի հավելված N 2-ի Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բակերի ընթացիկ վերանորոգման աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկով աշխատանքների վերջնաժամկետը է սահմանվել 200 օրացուցային օր՝ 17.12.2021թ.:

3. Պատվիրատուն «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ի միջև 01.06.2021թ. կնքված ԵՔ-Գ<ԱՇՁԲ-21/28 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բակերի ընթացիկ վերանորոգման աշխատանքները /այսուհետ՝ աշխատանք/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վճարել դրա համար»:

Աշխատանքների վերջնաժամկետը ըստ պայմանագրի սահմանված է եղել 17.12.2021թ. և այդ ընթացքում Ձեր կողմից կատարվել է պայմանագրային ծավալի 63.8%-ը:

24.12.2021թ. Ընկերության կողմից ստացել ենք գրություն՝ վերոնշյալ պայմանագրի շրջանակներում կատարվող հետագա աշխատանքների անհնարինության մասին՝ պատճառաբանելով տնօրենի մոտ ախտորոշված հետապնդող հիվանդությունը, որը անհամատեղելի է դարձնում աշխատանքի հետևողական խնելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ «Պայմանագիրը լուծվում է միակողմանի, եթե՝ ա/ Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, բ/ Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը, գ/ Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին, դ/ Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի Յ-ոդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի /Երևանի քաղաքապետի 16.11.2020թ. թիվ 3576-Ա որոշում/, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի հրաժարվում է կնքված պայմանագրից /2982814 ՀՀ դրամ գումարի չափով/՝

համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-L որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 21.04.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.05.2022թ. թիվ /26-1/7755-2022 գրությունը, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի 25.04.2022թ. թիվ 25/6300-22 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի և «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ի միջև 01.06.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/28» ծածկագրով պետության կարիքների համար աշխատանքների կատարման՝ կապալի պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բակերի ընթացիկ վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի հավելված N 2-ի Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բակերի ընթացիկ վերանորոգման աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկով աշխատանքների վերջնաժամկետը է սահմանվել 200 օրացուցային օր՝ 17.12.2021թ.:

Պատվիրատուն «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ի միջև 01.06.2021թ. կնքված ԵՔ-Գ<ԱՇՁԲ-21/28 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝

պայմանագիր) N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բակերի ընթացիկ վերանորոգման աշխատանքները /այսուհետ՝ աշխատանք/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վճարել դրա համար»:

Աշխատանքների վերջնաժամկետը ըստ պայմանագրի սահմանված է եղել 17.12.2021թ. և այդ ընթացքում Ձեր կողմից կատարվել է պայմանագրային ծավալի 63.8%-ը:

24.12.2021թ. Ընկերության կողմից ստացել ենք գրություն՝ վերոնշյալ պայմանագրի շրջանակներում կատարվող հետագա աշխատանքների անհնարինության մասին՝ պատճառաբանելով տնօրենի մոտ ախտորոշված հետապնդող հիվանդությունը, որը անհամատեղելի է դարձնում աշխատանքի հետևողական խնելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ «Պայմանագիրը լուծվում է միակողմանի, եթե՝ ա/ Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, բ/ Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը, գ/ Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին, դ/ Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի Յ-ոդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի

համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի /Երևանի քաղաքապետի 16.11.2020թ. թիվ 3576-Ա որոշում/, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի հրաժարվում է կնքված պայմանագրից /2982814 ՀՀ դրամ գումարի չափով/՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-L որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները»:

***<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 21.04.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:</u>***

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 3.1.4-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

Այսպիսով՝ վերը շարադրվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ն խախտել է իր և Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի միջև 01.06.2021թ. կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/28» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր

հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ինչ վերաբերում է ՍՑ-ՆԳ-2022/204 ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված առարկությանը, ապա հարկ եմ համարում հայտնել, որ առարկությամբ վկայակոչված փաստական հանգամանքները չեն հիմնավորվել՝ որևէ ապացույց ի հավաստումն հայտնածի չի ներկայացվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.05.2022թ. թիվ /26-1/7755-2022 գրությամբ «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**